ձինք ստացան ամենողորմած Կայսրից ընծաներ. Նուր—Վերտի Խանի այրին Խանում Գիլ—Ջամալ—Բայը երկու մեծ ապարանջան ոսկեայ՝ բոլորը ծածկած փէրուզայով, և ադամանդներով. Թուրքմենի օֆիցերներին և թարգման Էֆէնդիեվին թանկագին մատանիներ, 20 անձանց արժանի խալաթներ, և 30 անձանց ժամացոյցներ։

Պատգամաւորները հետեւեալքն էին.

Կառավարիչ «Վէքիլեան» ցեղի Մերվի Թուրքմէնների կապիտան Մահամէդ Խան Նուր Վէրտի Խանով, կառավարիչ Մերվի Թուրքմէնների «Բէգի»ի ցեղի կապիտան Մուրատ Խան Արբաբ Բէգով, և շատ ուրիշ մարդիկ թուով 40 հոգի, Անդրբկասպեան նահանգից. այդքան պատգամաւորներ և Դաղստանի նահանգից ներկայացան Նոցին Մեծութեանց։

Կայսեր հետ եկած էին կայսերական կառքով (поѣздъ) հոկտեմբերի 8ին պալատի նախարար գեներալ ադիւտանտ Վարանցով—Դաշկով, գինուորական նախարար գեներալ ադիւտանտ Վանոովսկի, ճանապարհական հաղորդակցութեանց նախարար ադմիրալ Պոսէտ, գեներալ ադիւտանտ Դանելով, կառավարիչ պալատի գեներալ ադիւտանտ Բիկստէր, կոմս Օլսունիեվ, Տերեմետեւ, Նորին Մեծութեան գլխաւոր աւագ բժիշկ պալատի Գիրշ և նկարիչ Զինչի։

Օրուայ ժամը 5ին Կայսերական կառքը (поѣздъ) ժամանեց Սարունչի կայարանը, որտեղ օգոստափառ ճանապարհորդներին ընդունեցին Աւշերոնեան թերակղզու նաֆթային գործարանատէրերից Պ. Պ. Կազլիակովսկին և Պ. Միրզայեանը։ Կազլիակովսկին ասելով մի ճառ ներկայացրեց՝ աղ ու հացն։ Սապունչու մօտ շինուած էր յաղթական կամար, որի վերեւում շղթաներից շինել էին Ա. և Մ. տառերը։ Նոցին Մեծութիւնք յաղթական կամարի մօտ գալով՝ կանգնեցին Ծատուրեանի գործարանի առաջին. գործարանը մանրամասն դիտելով՝ Նոցին Մեծութիւնք ուղեւորուեցին դէպի «Каспійско-Черноморскаго нефтопромышленнаго и торговаго Общества» նաւթահորը որտեղ բարեհաճեցին դիտել նաֆթի շատրուանը։ Գործարաններից Նոցին Մեծութիւնք բարեհաճեցին գնալ (въ павиліонъ)որը շին-